ՄԵՐ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Անվըհատ հոգով և միաբերան
Բարձըր հընչեցրէք ձեր ազնիւ տաղեր,
Ինչպէս անտառում նորադարձ գարնան
Երգում են աշխոյժ նորեկ թըռչուններ։
Ծառերի վերայ սև ագռաւները
Միասին խըմբուած՝ թող անվերջ կըռւան.
Մի՞թէ հընչական ձեր նըւագները
Խըռպոտ ձայներում պիտի խըլանան։

Երգեցէք խըրոխտ... փոյթ չէ. թըշնամին
Թո՛ղ մաղձով լըցուած՝ ձեզ ծաղրը անէ,
Հաւասար եղէք գալիք սերունդին
Նոցա ծաղրանքը չը պիտի հասնէ։
Բայց ձեր երգերի լայն ալիքները
Երկար կը զարնուեն մարդկանց սըրտերին,
Ինչպէս բարկութեամբ լի կոհակները
Զարնւում են ժէռոտ-քարոտ ափերին։

Թիֆլիս, 1890, 26. դեկտ.